Աստղիկ Ստեփանյան

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒԱՆԴԱՅՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԻ, ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր. Հայոց ցեղասպանություն, Ռուանդայի ցեղասպանություն, հանցագործության փուլեր, իրականցման մեթոդ, «Թեշքիլաթը մահսուսե», «Ինտերահավմե»:

Մարդկության պատմության ընթացքում տեղի ունեցած բազմաթիվ զանգվածային կոտորածներից, մարդկության դեմ կատարած լայնամասշտաբ հանցագործություններից եւ ցեղասպանություններից 20 դարում առանձնացնում ենք 4-ը՝ Հայոց Ցեղասպանությունը, Հոլոքոստը, Կամբոջայի ցեղասպանությունը և Ռանդայում թութսիների ցեղասպանությունը, որոնք ցեղասպանագետների մի մասի մոտ ընդունված է համարել տոտալ ցեղասպանություններ[1]

Սույն հոդվածումհամեմատական վերլուծություն կատարելու համար ընտրել ենք երկուսը՝ Հայոց Ցեղասպանությունը և Ռուանդայում թութսիների ցեղասպանությունը: Հարկ է նշել, որ ցեղասպանագիտության ոլորտում համեմատական վերլուծության մեթոդը արդյունավետ և արդիական է, քանի որ համեմատության միջոցով հնարավոր է դառնում ցույց տալ ուսումնասիրվող ցեղասպանությունների ամենաէական եւ բնորոշ հատկանիշները:

Հայոց Ցեղասպանության և Ռուանդայում թութսիների ցեղասպանության իրականացման փուլերը: Օսմանյան կայսրությունում հակահայկական քաղաքականությունը ձևավորվել էր դեռևս 19-րդ դարում սուլթանական վարչակարգի կողմից: Օսմանյան Կայսրությունում հայերի ցեղասպանության իրագործման երեք շրջաններից՝ Սուլթանական 1894-96 թթ., երիտթուրքական 1915-18 թթ., քեմալական 1920-23 թթ., համեմատական վերլուծության համար առանձնացրել ենք երիտթուրքերի կողմից ծրագրված հայերի զանգվածային բնաջնջման փորձը՝ նրա փուլերը, մեխանիզմներն ու մեթոդները: 1908 թ. Թուրքիայում ռազմական հեղաշրջման միջոցով իշխանության է գալիս «Իթթիհատ վե թերաքքի» («Միություն և առաջադիմություն») խմբավորումը, որն էլ 1914 թ. սկիզբ առած Առաջին աշխարահամարտն օգտագործեց Հայոց ցեղասպանության իրագործման համար: Երիտթուրքերի կողմից ծրագրված հայերի ցեղասպանությունը կարելի է բաժանել 3 փուլերի:

Զորահավաք և տղամարդկանց ոչնչացում: 1914 թվականին հուլիսի 1-ին հայտարարվում է համընդհանուր զորահավաք, որի ընթացքում Օսմանյան բանակ են զորակոչում 16-45 տարեկան ավելին քան 60 հազար հայ տղամարդկանց[2]: Միաժամանակ տեղի է ունենում հայկական բնակչության զինաթափում: Հայկական գյուղերը շրջափակվում էին քրդերի և թուրք ոստիկանների կողմից և պահանջում հայերից զենքերի հանձնում, որը ուղեկցվում էր նաև հայկական գյուղերի և հայ բնակչության թալանով: Զորակոչված հայ տղամարդկանց ոչնչացման պատճառներից մեկն էր 1914թ-ի դեկտեմբերի 9-ից 1915 թ. հունվարի 4-ը Սարիղամիշի ճակատամարտում թուրքական 3-րդ բանակի կրած պարտությունը էնվերի գլխավորությամբ: Սարիղամիաշի այդ խայտառակ պարտությունից հետո էնվերը պարտության պատճառներ փնտրելով կանգ առավ հայժողովրդի վրա՝ համարելով որ հայերի մեղքով տանուլ տվեց ճակատամարտը[3]: Հայ զինվորներին մեղադրում են դավաճանության մեջ և զինաթափվում են՝ նրանցից կազմում են աշխատավորական գումարտակներ և սպանում բոլորին:

---

[1] Տե՛ս Christian P. Scherrer: Towards a theory of modern genocide. Comparative genocide research: Definitions, criteria, typologies, cases, key elements, patterns and voids, Journal of Genocide Research, 1:1, (1999), p. 16.

[2] Տե՛ս Марукян А., Проблема Геноцида армян в современной геноцидологии, Е., 2010, с. 31.

[3] Տե՛ս Ա-Դո, Իմ հիշողությունները, «Լրաբեր հասարակական գիտությունների, 2015, թիվ 1», էջ 181-189:

«Վանից հրաման գնաց բոլոր գավառապետերին հավաքել շրջանի բոլոր տղամարդկանց 15 տարեկանից ի վեր անխտիր…խումբ-խումբ գնդակահարել և դիակները թաղել, անհետացնել»[1]

Այդ փուլի նպատակն էր ոչնչացնել հայ տղամարդկանց՝ զրկելով մնացած հայ բնակչությանը պաշտպանիչ ուժից, ինչը կհեշտացներ ցեղասպանության մնացած փուլերը իրականացնելու գործընթացը:

Հայ մտավորականության ոչնչացումը: 1915 թ. ապրիլ 24-ի գիշերը Կոստանդնուպոլսում սկսվում է հայ մտավորականության ձերբակալությունները: Հաջորդ շաբաթներին ձերբակալվում են մտավորականության և եւ հայկական տնտեսական ու քաղաքական վերնախավի մյուս խմբերը՝ Օսմանյան պառլամենտի հայ պատգամավորներ, գրողներ, բժիշկներ, բանաստեղծներ, քաղաքական գործիչներ: Ձերբակալությունները իրականացվում է «Թեշքիլաթը մահսուսեի» չեթեական խմբերի միջոցով ոստիկանության կենտրոնական վարչության կողմից տրամադրված ցուցակներով[2]: Հետաքրքրական է, որ այդ ցուցակները կազմվել էին շաբաթներ առաջ՝ 1914 թ. սկզբին դեռևս ոստիկանությունում առանձին ստեղծված բաժնում սկսվում է հայ մտավորականության ազդեցիկ դեմքերիի մասին տեղեկությունների հավաքումը: «Թեշքիլաթը մահսուսեն» չի խնայում անգամ Օսմանյան կայսրությունան ազգությամբ հայ նախարարներին: Այս փուլը նպատակ էր հետապնդում հայ ժողովրդին զրկել համախմբող գաղափարական ուժից:

Տեղահանության և համակենտրոնացման ճամբարների ստեղծման փուլ: Տեղահանությունը նպատակ էր հետապնդում հայ բնակչությանը հնարավորինս հեռավոր շրջաններ տանել և բնաջնջել: Բնականաբար, երիտթուրքերը հաշվարկել էին տեղահանության ճանապարհը և հեռավորությունը՝ հստակ գիտակցելով, որ հիմնականում կանանցից եւ երեխաներից կազմված քարավանների անդամներըայդքան ճանապարհը չէին կարող հաղթահարել՝ օրեր և շաբաթներ շարունակ մնալով առանց ուտելիքի ու ջրի, և մինչև տեղահանության ճամբարներ հասնելը հնարավոր կլիներ առանց դիմադրության հանդիպելու սպանելուժաթափ և հալածված բնակչության մեծ մասին:Իսկ տեղահանության ճամբարներ հասած մնացած բնակչությունը, բնականաբար ի վիճակի չէր լինելու պաշտպանվել՝ սովի և հալածանքի պատճառով: 1915 թ. մայիսի 13-ին ներքին գործերի նախարարությունը Թալեաթի առաջարկով դիմում է կառավարությանը «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենք ստեղծելու համար: Այս օրենքով երիտթուրք առաջնորդները փորձում են օրինական տեսք տալ հայերի տեղահանությանը: Նման օրենքի ընդունման պատճառներից մեկն էր 1915 թ. Անտանտի երկրների համատեղ հռչակագիրը, որտեղ խստագույն դատապարտվում է հայերի կոտորածները կայսրությունում, դրանք համարելով մարդկության դեմ կատարվող հանցագործություն[3]: Հետաքրքրական է, որ այս օրենքի ընդունում և ուժի մեջ մտնելը շատ արագ է տեղի ունենում, և տեղահանությունները պատճառաբանվում է, պատերազմական վիճակից ելնելով, իբրև թե հայերին անվտանգ վայրեր տեղափոխելը: Մյուս կողմից հետաքրքրական է, որ «Տեղահանության մասին օրենքը» Օսմանյան խորհրդարան է ուղարկվում 1915 թ. սեպտեմբերի 21-ին, երբ հայերի ոչնչացումն ու տեղահանումը ընթանում էր մեծ ծավալներով: Պառլամենտը Տեղահանության մասին օրենքը հաստատում է միայն 1916 թ. դեկտեմբերի 1-ին[4]: Երիտթուրքերի կառավարությունը փորձում էին ցեղասպանության իրականցման պատասխանատվությունը կիսել օրենսդիր մարմնի հետ, քանի որ արդեն պարզ էր դառնում,որ Օսմանյան Կայսրությունը պարտություն է կրելու Համաշխարահային պատերազմում և պետք էր արդարացումներ

---

[1] Նույն տեղում:

[2] Տե՛ս Պողոսյան Ստ., Հայոց ցեղասպանության պատմություն, II, Ե., 2009, էջ 558-559:

[3] Տե՛ս France, Great Britain, Russia joint declaration, //URL:http://www.armenian-genocide.org/ Affirmation. 160/current_category.7/affirmation_detail.html?fbclid=IwAR3a-O9mOpFWPCdzqd-ypgPnF8WxaPtYkZ_OMcRGhGqr-2Qm2Iv_JqjJvy0 02.05.2018

[4] Տե՛ս Авакян А., Геноцид 1915 г. Механизмнятия и исполнения решений, Е., 1999, с. 62.

գտնել իրենց հանցագործություններին[1]: Համակենտրոնացման ճամբարների ստեղծումը պայմանավորված էր նրանով, որ արդեն տեղահանության օրենքի հիմքի վրա բնակչությանը տեղափոխեին որքան հնարավոր է իրենց բնակավայրերից հեռու և կոտորեին հնարավորինս գաղտնիության պայմաններում: Դրանով էր պայմանավորված համակենտրոնացման ճամբարների ընտրության վայրերը, որոնք հիմնականում Միջագետքի անապատներում էին տեղակայում Դեյ-էր-Զորի, Ռաս-ուլ-այնի, Մեսքենեի և այլ վայրերում: Շատ շրջաններում տեղահանությունների վերջնակետին դեռ չհասած տեղահանված շրջանից փոքր հեռավորության վրա ոչնչացվում էին բոլորը:

Ռուանդայում բնակվող թութսիների և հութուների ազգությունների միջև բախումները տեղի է ունեցել մի քանի շրջաններում՝ հութուների հեղափոխության կամ Ռուանդայի անկախացման շրջանում 1959-61 թթ., Առաջին հանրապետության շրջանում՝ 1962-73 թթ., Երկրորդ հանրապետության շրջանում 1974 թ., 1990-93 թթ. Ռուանդայի տնտեսական ճգնաժամը և 1994 թ. թութսիների ցեղասպանության ժամանակ:

Ի տարբերություն Հայոց ցեղասպանության Ռուանդայում թութսիների ցեղասպանությունը այդ աստիճան մանրակրկիտ ծրագրված չէր: 1987 թ. Ռուանդային սահմանակից երկրում՝ Ուգանդայում թութսի աքսորյալները ստեղծում են «Ռուանդայի Հայրենասիրական ճակատը» (այսուհետ ՌՀՃ), որի հիմնական նպատակը Ռուանդայի նախագահ Հաբյարիմանի ռեժիմի տապալումն էր Ֆրանսիայի օգնությամբ:1990 թ. ՌՀՃ սկսում է հարձակումները Ռուանդայի ուղղությամբ[2]: Բացի այդ ցեղասպանությանը նպաստեցին Ռուանդայում սկիզբ առած տնտեսական ճգնաժամը, քաղաքացիական պատերազմը, աճող ներքին ու արտաքին այլ խնդիրներ: 1990-1993 թթ. թութսիների հանդեպ նկատվում է բռնության աճ: Որպես այդպիսին ցեղասպանություն իրականացնող «Ինտերհավմեն» փուլային բաժանում չէր տվել իր գործողություններին: Այստեղ պետք է հաշվի առնել այն կարևոր հանգամանքը, որ Ռուանդայում ցեղասպանությունը տևում է 100 օր, և հազիվ թե հնարավոր լիներ մանրակրկիտ ծրագրավորել հանցագործության փուլերը:

Առաջին փուլում կարևոր դերակատարում է ունենում **պրոպագանդան**: Դեռևս 1993 թ. Ռուանդայի ռադիոկայաններից, որոնք ամբողջությամբ հութուների ձեռքում էին, սկսվում է հեռարձակվել թութսիների դեմ ատելություն սերմանող Հուտթուների 10 հրահանգները և անընդհատ շեշտում «Հութուները պետք է ամուր կանգնած լինեն մեր համընդհանուր թշնամի թութսիների դեմ[3]»: Այս համընդհանուր բռնությունների ֆոնին 1993 մարտ-ապրիլ ամիսներին սկսվում է բանակցային փուլը նախագահ Հաբյարիմանի և ՌՀՃ-ի միջև Արուշա քաղաքում խաղաղություն հաստատելու համար, որտեղ տեղակայվում է ՄԱԿ-ի խաղախապահ ջոկատը: Այս բանակցությունները սակայն վերջնական արդյունք չեն տալիս:

Բուն ցեղասպանության սկիզբ է համարվում 1994 թ. ապրիլի 6-ը, երբ Ռուանդայի նախագահ Պ.Հաբյարիմանը վերադառնում էր բանակցություններից Կիգալի քաղաքի օդնավակայանում խոցում են ինքնաթիռը, որում բացի նախագահից այլ բարձրաստիճան պաշտոնյաներ ևս կային: Սա պատճառ է հանդիսանում հութուների համար մեղադրել թութսիներին նախագահի սպանության համար: Ապրիլի 6-ին սկսում են առաջ ընթանալ նաև ՌՀՃ զորքերը Կիգալի ուղղությամբ: Հյուսիսում գտնվող ռուանդնացիները պնդում են, որ ՌՀՃ զորքերը սկսել էին արդեն հարավ ընթանալ նախքան կիմանային նախագահի սպանության լուրը[4]:Հաբյարիմանայի մահից հետո Ռուանդայում ամբողջ իշխանությունը անցնում է գնդապետ Բագոսարոյին: Գլխավոր շտաբի հետ Բագոսարոյի ղեկավարությամբ առաջնային նպատակներից էին առանձնացնել երկու տիպի սպանություններ՝ կոնկրետ անհատների և թութսիների՝ որպես խմբի[5]: Ռուանդայում ցեղասպանությունը տեղի է ունենում 1994 թ. ապրիլի 6-ից մինչև հուլիսի 17-ը: Այն

[1] Տե՛ս Марукян А., Проблема Геноцида армян в современной геноцидологии, Е., 2010, с. 37.
[2] Տե՛ս Jones A., Genocide a comprehensive introduction, New York, 2006, p 236:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 237:
[4] Տե՛ս Des Forges A., Leav none to tell the story. Genocide in Rwanda, 1999, P. 145.
[5] Նույն տեղում, p. 158:

բռնկվում է միանգամից երկրի ողջ տարածքով մեկ, սակայն տարբեր շրջաններում դինամիկան տարբեր է, շատ սպանությունները տեղի են ունենում առաջին հինգ շաբաթների ընթացքում[1]: Այդ ընթացքում տեղի է ունեցել ցեղասպանության 80 տոկոսը: Սկզբում թութսիներից «մաքրվում է» մայրաքաղաք Կիգալին, հետագայում համընդհանուր կոտորածները տարածվում են ամբողջ երկրով մեկ:

Ոչնչացումների կազմակերպիչները նպատակ ունեին առաջին հերթին վերացնել բոլոր նրանց, ովքեր կկանգնեին իրենց ճանապարհին՝ անկախ խմբային պատկանելիությունից՝ բոլոր նրանց, ովքեր կփորձեին քննադատել Հաբյարիմանայի ռեժիմը և նրանք, ովքեր կփորձեին մերժել հութու ռեժիմը՝ լրագրողներ, հոգևորականներ, քաղաքացիական հասարակության և այլոք: Ապրիլի 7-ին արդեն Բագոսարոյի կառավարությունը հրապարակում է բոլոր այն անհատների անունները, որոնց պետք է սպանեին:Ռուանդայում համակենտրոնացման ճամբարներ ստեղծվում են փախչող թութսիներին մի վայրում հավաքելու համար, ի տարբերություն հայերի ցեղասպանության կառավարությունը խնդիր չէր դրել տեղահանել, նոր սպանել: Ականատեսների վկայություններով, զինվորները շրջում էին փողոցներով, անընդհատ ստանալով հեռախոսազանգեր, մտնում էին տներ՝ սպանելով մարդկանց դուրս էին գալիս: Թութսիները սկսում են զգուշանալ, բոլորը դուրս են գալիս աշխատան Հաճախ թութսիները մնում էին դպրոցներում, եկեղեցիներում, հիվանդանոցներում, որտեղ նրանց ապաստան էին առաջարկում: Այդ ապաստանները բերեցին նրանց, որ հետագայում արդեն սկսում են հարձակումներ գործել այդ կառույցների վրա թութսիներին ոչնչացնելու համար: քից, փակվում են տներում, կամ աշխատում են ակտիվություն ցույց չտալ, աննկատ մնալ:

Ապրիլի 12-ին Պաշտպանության նախարարությունը ռադիոկայանով հաղորդագրություն է տարածում, որ զինվորականները, ժանդարմերիան և բոլոր ռուանդացիները որոշել են պայքարել իրենց հակառակորդի դեմ, և իրենք հայտանաբերել են բոլորին[2]: Չէին խնայում երեխաներին, հութու հորից և թութսի մորից ծվնած երեխան ևս համարվում էր թութսի:

Եթե փորձենք տալ Ռուանդայի ցեղասպանության փուլային բաժանումը, ապա առաջին փուլը **պրոպագանդան** էր, երկրորդը **անհատների** ոչնչացումները, իսկ հետո **թութսիներին որպես խմբի** ոչնչացումը:

Հայոց ցեղասպանության և Ռուանդայում թութսիների ցեղասպանության իրականացման մեխանիզմները և ձևերը: Ցեղասպանության ծրագրմանհամար կարևոր դերակատարում ունի այն մեխանիզմը և մեթոդը, որով պետք է իրականցվի թիրախ խմբի զանգվածային ոչնչացումը: Հայոց Ցեղասպանության իրագործման հիմնական մեխանիզմը և գործքիը «Թեշքիլաթը մահսուսեն» էր, որը անմիջապես ղեկավարվում էր «Իթթիհատ վե Թերաքի» կուսակցության պարագլուխների կողմից: Մինչև 1910 թվականները այս կառույցը գործում էր որպես կուսակցության անվտանգությունը ապահովվող բաժին: 1911 թվականից այդ կազմակերպությունը կուսակցության ներքո անվանափոխվում է «Հատուկ կազմակերպություն»՝ «Թեշքիլաթըմահսուսե», որը կազմվում է երկու մասից ռազմական և քաղաքացիական: Ռազմական թևն ենթարկվում է երիտթուրք պարագլուխ էնվեր փաշային: Ռազմական թև իր վրա է վերցնում ոչնչացումների հրահանգները, քաղքացիական թև հիմնական գործառութը բնակչության տեղահանությունները կազմակերպելն էր:

Այդ ընթացքում արագ ավելանում է կազմակերպության անդամների թիվը: Հատուկ կազմակերպությունը կազմված էր ավազակախմբերց, քրդերից և բանտերից ազատված հանցագործներից: «Թեշքիլաթը մահսուսե» ջոկատները ղեկավարվում էին բանակի գործող սպաների կողմից: Երբ հայերին իբրև թե տեղափոխում էին իրենց բնակավայրերից ավելի ապահով վայրեր, իրենց բնակավայրից քիչ հեռու հարմար կայանատեղում, բոլորի աչքից հեռու, չեթեական խմբերը հայտնվում էին և ոչնչացնում

[1] Տե՛ս Straus S., Rwanda and Darfur, a comparative analysis Genocide studies and prevention an international journal 1:1, 2006, p. 42.
[2] Տե՛ս Des Forges A., Leav none to tell the story. Genocide in Rwanda, 1999, P 155-158.

բոլորին[1]: «Իթթիհատ վե Թերաքի» կուսակցությունը ջարդերի կազմակերպման համար ստեղծում է նաև հատուկ պատվիրակների գործուղումը նահանգներ[2]: Թալեաթը եղեռնի իրագործման գլխավոր կամզակերպիչ էր տեսնում միություն և առաջադիմություն կուսակցության անդամներին, տեղական մարմիններ ներկայացուցիչներին պահանջելով հնարավոր և անհնար ամեն բան անել խնդիրը լուծելու համար: «Թեշքիլաթը մահսուսեի» հիմանական հանձնարարութուններն էին կազմակերպել հայերի զինաթափումը, կազմակերպել տեղահանությունները ուղեկցող ջոկատների միջոցով, տեղահանվածների ոչնչացումները իրականացնելը, նահանգային իշխանությունների գործողությունների վերահսկումը և համակարգումը ցեղասպանության կազմակերպման գործում: Այստեղ շատ կարևոր է այն, որ հայերի բնաջնջման անհրաժեշտությունը տեսականորեն հիմնավորում է և կուսակցության քաղաքական ծրագիր է դարձնում դոկտոր Նազմը, իսկ այդ ծրագիր իրականացումը գլխավորում է Բ.Շաքիրը[3]:Այն բոլոր տարածքներում, որտեղ ակտիվ էր «Թեշքիալթը մահսուսեն» չեթեական ջոկատները իրականացրել են հայերի կոտորածները, հայ բնակչության կողոպուտը, առևանգումները[4]: Հատուկ կազմակերպությունից բացի այլ ուժային կառույցներ ևս մասնակցում են հայերի ոչնչացումներին: Առաջին հերթին խոսքը վերաբերվում է Թուրքական բանակի մասնակցությանը: Բանակի մեղսակցության հանգամանքը առաջ է գալիս դեռևս 1914 թվականին հայտարարված հայ տղամարդկանց զորակոչի ժամանակ, երբ բանակ զորակոչված հայ զինվորները ոչնչացնում են 1915-16 թթ.: Բանակի գլխավոր հրամանատար և ռազմական նախարար էր Էնվերը, ով նաև «Թեշքիլաթը մահսուսեի» ռազմական թևի ղեկավարն էր, հետևաբար նա աշխատանքները կազմակերպում էր նաև բանակի միջոցով: Թուրքական բանակի մասնակցությունը հայերի կոտորածներին մեծ չափեր է ընդունել հատկապես Վան նահանգում Զևդեթի գլխավորությամբ[5]: Թուրքական բանակի և «Հատուկ կազմակերպության» միջև կապը և համագործակցությունը ավելի քան ակնհայտ էր, քանի որ բանտերից ազատված հանցագործները ռազմական նախարարության հովանավորությամբ էին պատրաստություն անցնում իսկ «Թեշքիլաթը մահսուսեի» ջոկատները առաջնորդվում էին բանակի գործող սպաների կողմից: Մեծ է նաև ոստիկանության, ժանդարմերիայի մասնակցությունը Հայոց Ցեղասպանության տարիներին: Ոստիկանությունը գտնվում էր ցեղասպանությունը իրականացողների անմիջական հսկողության տակ: Ներքին գործերի նախարար Թալեաթը ղեկավարում էր Ոստիկանությունը և ղեկավարում էր վերջիններիս կատարած գործողությունները: Ժանդարմեիան հիմնականում կատարում է տեղահանվածների քարավանները ուղեկցելու հանձնարարությունը, իհարկե կատարում էին սպանությունները: Կանոնավոր ուժային կառույցներ ներգրավվածությունից բացի ցեղասպանության իրագործման համար կարևոր մասնակցություն են ունեցել սովորական մահմեդական բնակչությունը: Սա քարոզչության հետևանքն էր, երբ ընդհանուր ատելության մթնոլորտ էր ստեղծվեր երկու ազգերի միջև: Բնակչության զանգվածային մասնակցության հարցը թերևս ամենակարևորն է, քանի որ առանց հասարակական տրամադրվածության դժվար կլիներ ծրագրի իրականացումը Հայերի զանգվածային սպանություններին ամենաակտիվ մասնակցություն են ունենում քրդերը, չերքեզները: Քրդերի և մնացածի համար հիմնական շահ էին հանդիսանում հայերի ունեցվածքին տիրանալը առանց հետագա պարտավորությունների[6]:

---

[1] Տե՛ս Մաթոսյան Տ., Հայոց Ցեղասպանություն և Հրեական հոլոքոստ. համեմատման փորձ, Ե., 2005, էջ 101:

[2] Տե՛ս Պողոսյան Ստ, Հայոց ցեղասպանութայն պատմություն, h. II, Ե., 2009, էջ 355:

[3] Նույն տեղում, էջ 376-377:

[4] Տե՛ս KevorkianR., The Armenian Genocide, a completely history, NY, 2011, p. 220-221.

[5] Տե՛ս Մաթոսյան Տ., Հայոց Ցեղասպանություն և Հրեական հոլոքոստ համեմատական փորձ, Ե., 2005, էջ 106:

[6] Տե՛ս //URL:http://www.armenianlanguage.am/images/menus/1586/Vahram_Petrosyan.pdf ?fbclid=IwAR1ZTn2IbnsYDorPYlKz6koyv8dr4XjfK63A-GtBZWFL-cPxkdYf2AN5v8k, 20.03.2018:

Իրականացման ձևերի առումով պետք է առանձնացնել որոշակի թվով գնդակահարությունները, զորակոչը, զանգվածային տեղահանությունները,բռնի մահմեդականացումը, երեխաների մի խմբից մյուսը փոխանցելը: Իրականում գնդակահարությունները սահմանափակ թվով էին պայմանավորված զենքի և փամփուշտների խնայողությամբ: Այն հիմնականում կիրառվում է բանակ զորակոչված հայ տղամարդկանց նկատմամբ: Երբ ձերբակալված, տեղահանված հայերի խմբերը ջոկատների ուղեկցությամբ հանսում էին տեղահանման ճամբար թուրք զինվորականները թողնում էին, որպեսզի քրդերը, չերքեզները հարձակվեն հայերի վրա մահակներով, մուրճերով, կացիններով և գործիքներով[1]: Անընդհատ նոր մեթոդների էին դիմում դահիճները՝ զանգվածային այրում էին, կախաղան բարձրացնում, խեղդում ջրհորներում, փակում քարանձավներում: Տրապիզոնում Իթթիհատական ներկայացուցիչը տեղի բժիշկներից մեկի հետ երեխաներին փակում է մի սենյակում և թունավոր գազի միջոցով խեղդում երեխաներին[2]: Հաճախ օգտագործվող մեթոդներից էր ջրասույզ անելը հատկապես երեխաներին և կանանց, ովքեր լողալ չգիտեին

«Մի շարք փոքրիկ նավեր վերցրեցին այդ մարդկանց և ճամփա ընկան դեպի Սամսուն: Ընդհանուր կարծիքն այն է, որ նրանց խեղդել են..Նրանց շարեցին միմյանց հետևեցի և այդպես հրացանազարկ արեցին…Կանանց նախ բռանաբարեցին ժանդարմերայի սպաները ապա թողեցին ժանդարմերիայի տրամադրությանը…: Ըստ ականատես վկայի նրանք երեխաներին սպանում էին նրանց գլուխը ապառաժ քարերի վրա ջախջախելով»[3]:

Ռուանդայում թութսիների ցեղասպանության իրագործման համար մեծ դերակատարություն է ունենում հատուկ կազմակերպությունը՝ «Ինտերհավմեն»: «Ինտերահավմեն» հուտուների ռազմական կազմակերպությունն էր, Ռուանդայի իշխող կուսակցության երիտասարդական թևը, ևինչպես «Թեշքիլաթը մահսուսեն», սա նույնպես վայելում էր կառավարության աջակցությունը: «Ինտերահավմե» բառը ունի մի քանի տարբեր նշանակություն և թարգամանություններ՝ նրանք, ովքեր պայքարում են միասին, նրանք ովքեր աշխատում են միասին: Խմբի ղեկավարը՝ Ռոբերտ Կաջուգանթութսի էր: Այն իր վրա է վերցնում թութսիների ցուցակների կազմումը, դրա տարածումը և ոչնչացումների իրականացումը: Բացի Ցեղասպանությունը իրականացնելուց, այս խումբի ձեռքում էր նաև երկրի ռադիոկայանը, որը ծառայեցնում էին քարոզչության նպատակով՝ էթնոկենտրոն և քսենոֆոբիական հայտարարություններ տարածելով: Նրանք հութու բնակչության վախ էին ներշնչում, որ եթե իրենք չսպանեն թութսիներին, ապա հաստատ թութսիները վերջ կտան հութուներին: Ինչպես Հայոց ցեղասպանությունում Ռուանդայում էլ կարևոր էր մնացած ուժային կառույցների ներգրավվածությունը գործողություններում՝ ռազմական նախարարությունը, քաղաքային ոստիկանությունը և բնակչության մասնակցությունը: Կազմակերպիչները հրահանգները ուղղում էին «Ինտերահավմեի» և ռազմական ուժերին դրանք իրականցնելու համար: Բացի կառավարման համակարգից նաև ակտիվ մասկացություն են ունենում այլ անհատներ՝ եկեղեցին, գործարար համայնքը, համալսարանները, դպրոցները, հիվանդանոցները աջակացում են կառավարության որոշումներին[4]: Ազգային ոստիկանությունը և զինվորականությունը ակտիվ մասնակցություն են ունենում հատկապես ցեղասպանության իրականացման սկզբի օրերին Կիգալիում: Զինվորականները վճռական դեր են ունեցել հրամանները տալու և սպանությունները իրականցնելու հարցում: Ամբողջ երկրի տարածքում սկսվում է սպանությունները Նախագահական գվարդիայի, Պարետապահակային ջոկատների, հետախուզական գումարտակների և զինվորականության մասնակցությամբ: Զինվորականները և ոստիկանությունը ջարդերով չէին բավարվում, նրանք

[1] Տե՛ս Մաթոսյան Տ., նշվ. աշխ., էջ 127-128:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 130:
[3] Լեփսիուս Յ., Գաղտնի տեղեկագիր հայ ժողովրդի ջարդերի, Ե., 2003 էջ 24:
[4] Տե՛ս Des Forges A., Leav none to tell the story. Genocide in Rwanda, 1999, P 175-176.

կոչով դիմում էին սովորական քաղաքացիներին, որ իրենք էլ պետք է օժանդակեն բանակին, որ իրենց դերակատարությունը նույնպես շատ կարևոր է[1]:

Ի տարբերություն Հայոց ցեղասպանության այստեղ չկար գաղտնիության պահպանման խնդիր: Մարդիկ ամեն օր մամուլով հրապարակում էին ատելության կոչեր, մղում սպանությունների՝ հավատացնելով որ հակառակ դեպքում իրենք կդառնան զոհեր: Ցեղասպանության իրականացման համար ամենառաջնային մեթոդներից է դառնում մաչետե տեսակի դանակներով մարդկանց զինումը: Դա դանակների համեմատաբար մեծ տեսակներ էին, որը օգտագործում էին գյուղատնտեսական աշխատանքներում: Մեծ էր թութսիների ցեղասպանության մեջ հութու բնակչության զանգվածային մասնակցությունը: Երբ իշխանությունները թութսիներին բոլոր վայրերում հայտնաբերելու և սպանելու հրահանգ տվեցին հարյուր հազարավոր հութուներ միանգամից անցան գործի: Նրանք սպանում են անողոք և երբեմն հաճույքով: Մասնակիցների մեծ մասը ծայրահեղ աղքատության մեջ գտնվողներն էին, երիտասարդներ: Աղքատների համար լավ հնարավորություն էր հարստության տիրանալու համար, այդ խմբերը երբեմն առաջնորդում էին զենքի մասին հմտություններ և փորձ ունեցող տղամարդիկ[2]: Ռուանդայի ցեղասպանության մեջ հետաքրքրական է հութու կանանց զանգվածային մասնակցությունը սպանություններին: Դա պայմանավորված էր նրանով, որ հութու կանայք համարվում էին տգեղ և ոչ համակրելի իտարբերություն թութսի կանանց, ովքեր ավելի գեղեցիկ էին: Այս կերպ հութու կանայք փորձում էին իրենց վրեժը լուծել թութսի կանանցից: Ռուանդայում մեծ թվերի է հասնում սեռական բռնությունները. Ուսումնասիրողները այն գնահատում են 150 հազարից մինչև 250 հազար բռնաբարություններ[3]: Շատ հետազոտողներ նույնիսկ ավելի մեծ թվեր են առանձնացնում: Այս գործողությունները հետագայում լուրջ հոգեբանական հետևանքներ են թողնում: Այդ մեթոդը կիրառում էին կանանց նկատմամբ նույնիսկ այն բանից հետո երբ նրանց աչքի առջև սպանում էին ընտանիքի անդամներին, այրում տունը և նրանց էլ բռնաբարելուց հետո թողնում էին որ ապրեին որպեսզի «տխրությունից մեռնեն»[4]:

Ամփոփելով ներկայացվածը՝ կարող ենք արձանագրել: Երկու ցեղասպանություններն էլ իրականացվել են սպանության տարբեր մեթոդների ու ձևերի կիրառմամբ: Չնայած այն հանգամանքին, որ Ռուանդայում տեղի ունեցած ցեղասպանությունը 20-րդ դարի վերջին տասնամյակում էր, այնուամենայնիվ վայրագությունների, սպանությունների առումով ոչ պակաս սարսափելի պատկեր ենք տեսնում: Ինչպես Հայոց ցեղասպանության դեպքում, այստեղ նույնպես կա սառը զենքի կիրառման զանգվածայնություն, ատելության և անհադուրժողականության, շահի վրա հիմնված սպանությունները հասարակ բնակչության կողմից: Ցեղասպանության պլանավորման և իրագործման առումով ի տարբերություն Հայոց ցեղասպանության Ռուանդայում ամեն ինչ տեղի է ունենում անհամեմատ արագ և քիչ կազմակերպված:

Կարելի է նշել, որ այնտեղ կազմակերպման առումով հստակ ծրագիր չկար, երկրի իշխանությունները ի տարբերություն Օսմանյան կայսրության կառավարության լայնածավալ օգտագործում են մամուլը բացահայտ սպանությունների քարոզչության համար: Օսմանյան կայսրությունում երիտթուրք առաջնորդները ընդհակառակը գաղտնի գործելու խնդիր էին դրել իրենց առջև: Երկու ցեղասպանությունների իրականացման համար ստեղծվում են հատուկ կազմակերպություններ, որոնք իշխանության ղեկին գտնվող կուսակցությունների անմիջական ենթարկվողներն էին՝ Հայոց Ցեղասպանության դեպքում «Թեշքիլաթա մահսուսեն», Ռուանդայում՝ «Ինտերահավմեն»:

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 177-178:

[2] Տե՛ս Interview: The Rwanda's military tortured civilians, //URL:https://www.hrw.org/news/2017/10/10/interview-rwandas-military-tortured-civilians,04.04.2018:

[3] Տե՛ս Straus S., Rwanda and Darfure, a comparative analaysis Genocide studies and prevention an international journal 1:1, 2006, p 44:

[4] The Rwandan genocide methods,//URL:https://rwandangenocideela12.weebly.com/methods-used.html: 08.04.2018

Астхик Степанян, Сравнительный анализ этапов, методов и механизмов геноцида армян и геноцида в Руанде. В статье методом сравнения анализируются этапы реализации двух геноцидов, которые имеют отличия. Реализация Геноцида армян разделена на четыре этапа. В Руанде нет разделение таких этапов. Методы и механизмы геноцида, совершенного в Руанде и геноцида армян, имеют сходство. В осуществлении двух геноцидов участвуют армия страны, полиция, рядовое население. В обоих случаях одним из методов реализации является массовое использование холодного оружия, разливы и изнасилования.

Ключевые слова: Геноцид армян, геноцид в Руанде, этапы преступления, методы реализации, «Тешкилят-и Махсуса», «Интерахавме».

Astghik Stepanyan, Comparative analysis of the Armenian Genocide and the Rwanda genocide (phases, implementation methods and mechanisms). The article analyses the stages of the implementation of two genocides by a comparative method. The implementation of the Armenian Genocide is divided into four stages: There is no phase division in Rwanda. The methods and mechanisms of the genocide committed in Rwanda and the Armenian Genocide have also similarities. The country's army, police, ordinary population were involved in the implementation of the two genocides. One of the methods of implementation is the massive use of cold weapons, spills and rape.

Key words.: The Armenian genocide, the Rwandan genocide, the phases of the crime, the method of implementation, "Teshkilat Mahsuse", "Interahavme".